

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԿԱԴԵՄԻԱ
Հր.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ԶԱՐՈՒՀԻ ՎԻԳԵՆԻ ՈՍԿԱՆՅԱՆ

**ԱԼԲԵՐՏՈ ՍՈՐԱՎԻԱՅԻ «ՉՈՉԱՐԱ» ԵՎ «ԱՐՀԱՄԱՐՀԱՆՔ» ՎԵՊԵՐԻ
ՀԱՅԵՐԵՆ ԵՎ ՌՈՒՍԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՈՒՆ
(ԶՈՒԳԱԴՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ)**

**Ժ. 02.02-«Ընդհանուր և համեմատական լեզվաբանություն» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության**

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝

բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Վ. Գ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Գ. Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ
Ֆ.Մ. ՀՈՎՀԱՆՆԻՄՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝

Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2014 թ. հոկտեմբերի 20 –ին ժամը 15⁰⁰-ին՝ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՀ-ի Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0015 Երևան, Գր. Լուսավորիչ 15:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թ. սեպտեմբերի 19–ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ՝

Ն. Սիմոնյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ա. Մորավիան 20-րդ դ. իտալական գրականության նեոռեալիստական ուղղության ամենավառ ներկայացուցիչներից մեկն է և գրական ասպարեզում հայտնի է մի շարք վեպերով և պատմվածքներով:

Ա. Մորավիայի «Չոչարա» վեպը լույս է տեսել 1957թ., այն հեղինակի թերևս ամենահաջողված ստեղծագործություններից մեկն է: Վեպի լեզուն աչքի է ընկնում այնպիսի առանձնահատկություններով, որոնք արտացոլված են ժողովրդախոսակցական բառերի, դարձվածային միավորների, բարբառային ձևերի, առածների և ասացվածքների լայն կիրառմամբ: Վեպը հայերեն լույս է տեսել 1960 –ական թթ. (թարգմանիչ՝ Գևորգ Վիրապյան)¹: «Չոչարա» վեպը ռուսերեն լույս է տեսել տարբեր թարգմանություններով (թարգմանիչներ՝ Գ. Բոզեմսկի, Ռ. Խլոդովսկի և Ե. Բոչարնիկովա): «Արհամարհանք» վեպը ևս թարգմանվել է Գ. Բոզեմսկու և Ռ. Խլոդովսկու կողմից:

Այդ թարգմանություններն էլ հանդիսանում են մեր ուսումնասիրության առարկան²:

Ա. Մորավիայի «Արհամարհանք» վեպի լեզուն համեմված է բուրժուական խավերի լեզվին բնորոշ տարրերով, բառապաշարի որոշակի առանձնահատկություններով: Այս վեպը ևս իտալերենից հայերեն է թարգմանել Գևորգ Վիրապյանը (լույս է տեսել 1966թ.):

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Թեմայի արդիականությունը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.

ա) գեղարվեստական ստեղծագործությունների թարգմանությունները կարևոր են հայերենի բառապաշարի հարստացման և համալրման գործում,

բ) թարգմանություններում ի հայտ են գալիս մի շարք նորակազմ բառեր և բառային պատճենումներ, ինչպես նաև անհատական փոխաբերության որոշ դեպքեր, որոնք կարող են իրենց կիրառումը գտնել ժամանակակից հայերենի բառապաշարում,

գ) վեպերն աչքի են ընկնում դարձվածային միավորների լայն կիրառությամբ, որն ուսումնասիրության հարուստ դաշտ է ներկայացնում:

Ատենախոսության նպատակը և խնդիրները:

Ատենախոսության նպատակը նշված ստեղծագործությունների բնագրի, հայերեն և ռուսերեն թարգմանությունների բառապաշարի առանձին, ինչպես նաև ընդհանուր գուգադրական ուսումնասիրությունն է:

Ըստ այդմ առաջադրվել և իրենց լուծումներն են գտել հետևյալ **խնդիրները**.

ա) գուգադրական քննությամբ վերհանել գրական հայերենի նորմային

¹ Մորավիա Ա., Չոչարա, Արհամարհանք, Վեպեր, Երևան, 1989:

² Моравия А., Римские рассказы, Чочара, роман, Москва, 1987, Моравия А., Римлянка, рассказы, Презрение, роман, Москва, Мастера современной прозы:Италия, 1978:

համապատասխան բառային գործածության առանձնահատկությունները,

բ) բացահայտել և ուսումնասիրել թարգմանությունների մեջ տեղ գտած նորակազմ բառերի և բառային պատճենումների ձևային և իմաստային համապատասխանությունները և տարբերությունները, ինչպես նաև մեկնաբանել դրանց կերտման նպատակահարմարությունը,

գ) անդրադառնալ դարձվածային միավորների կառուցվածքային և իմաստային առանձնահատկություններին՝ վերջիններս դասակարգելով ըստ բաղադրիչների ընդգրկման և բնույթի,

դ) քննել թարգմանության մեջ առկա փոխառյալ բառերի և օտարաբանությունների կիրառման իմաստային և ոճական առանձնահատկությունները:

Ատենախոսության նորույթը պայմանավորված է հետևյալ գործոններով. առաջին անգամ գիտական մակարդակով ներկայացվում է հիշյալ վեպերի հայերեն թարգմանությունների բառապաշարի բազմաբնույթ և բազմակողմանի զուգադրական ուսումնասիրություն, որը իրականացվում է երեք լեզուների բառաքերականական մակարդակում: Նորույթ է նաև այն, որ զուգադրական ուսումնասիրությունը կատարվում է ոչ միայն լեզվական, այլև որոշ դեպքերում լեզվամշակութային համատեքստում:

Ատենախոսությունը և նրա թեմայով հրատարակված նյութերը ունեն **կիրառական նշանակություն** հայերենի բառապաշարի հարստացման և համալրման գործում, ինչպես նաև իտալերեն և հայերեն լեզուների դասավանդման բնագավառներում:

Աշխատանքի կառուցվածքը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, որն ունի երկու ենթաբաժին, չորս գլխից, որոնք բաժանվում են համապատասխան ենթաբաժինների, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և այլ աղբյուրներից: Աշխատանքի ծավալը կազմում է համակարգչային 140 էջ:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Ներածության առաջին ենթաբաժինը նվիրված է Ա. Մորավիայի գեղարվեստական ստեղծագործությունների ներկայացմանը, իսկ երկրորդը՝ «Չոչարա» և «Արհամարհանք» վեպերի լեզվի ընդհանուր բնութագրմանը:

Առաջին գլուխը՝ «**Բառային թարգմանություն**», նվիրված է գրական հայերենի նորմային համապատասխան բառային գործածության, նորակազմ բառերի և բառային պատճենումների, այլ բարբառային և խոսակցական բառերի, առածների և ասացվածքների քննությանը:

Ա. Մորավիայի վեպերի հայերեն թարգմանությունների լեզուն անցյալ դարի 60 –ական թվականների գրական արևելահայերենն է, որ բնութագրվում է ժամանակին բնորոշ հարուստ բառապաշարով և քերականական ձևերի կանոնակառուցմամբ: Գրական արևելահայերենն աչքի է ընկնում գործառական բազմազանությամբ, և գեղարվեստական գրականության յուրաքանչյուր նմուշ՝ լինի ինքնուրույն կամ թարգմանական, անպայման հանդես է գալիս գրական

արևելահայերենի կանոնականությանը համապատասխան: Ա. Մորավիայի վեպերի հայերեն թարգմանությունները ևս բացառություն չեն, գրեթե լիովին ունեն գրական հայերենի նորմային համապատասխան բառային գործածություն:

Ուսումնասիրության առարկա երկու վեպերի բառապաշարը ներկայացնում է զգալի տարբերություններ: Եթե «Չոչարայի» լեզուն, մասնավորապես բառապաշարը, ընդհանուր առմամբ կարելի է բնորոշել որպես ժողովրդախոսակցական, ապա «Արհամարհանքի» լեզուն ամբողջովին այլ է. այն առանձնանում է խիստ գրական ուղղվածությամբ՝ պահպանելով գրական լեզվի առանձնահատկությունները և՛ հայերեն, և՛ ռուսերեն թարգմանությունների մեջ: Մակայն որոշ դեպքերում հայերեն թարգմանության մեջ տեղ են գտել ժողովրդախոսակցական բառապաշարին բնորոշ միավորների գործածություններ: Օրինակ՝

...մենք հազիվ էինք մի կերպ յույ գնում իմ ստացած կոպեկներով... (էջ 414) // ...riuscivamo appena a campare con il mio stentato lavoro... (p. 6) // ... и мы еле сводили концы с концами (с. 1):

Յոյա գնալ արտահայտությունը հատուկ է ժողովրդախոսակցական լեզվին, մինչդեռ բնագրի campare բայը պատկանում է իտալերենի գրական շերտին և նշանակում է՝ սպրել, գոյություն ունենալ: Ռուսերենում օգտագործված է сводить концы с концами դարձվածային միավորը, որը նույնպես գրական բնույթի է:

«Չոչարայի» թարգմանության մեջ հանդիպում են մի շարք բառեր, որոնք գրական լեզվի կանոններից բառային ակնհայտ շեղումներ են: Օրինակ՝

- Խե դճ աղջիկ, բռնանամ ես, խե դճ Ռոզետտա (էջ 376) // *Poveretta, povera figlia, povera Rosetta, quanto mi dispiace, quanto mi dispiace* (p. 286) // *Бедняжка, бедная девочка, бедная Розетта, несчастная, вот несчастная* (с. 605):

Չայերեն թարգմանության մեջ հանդիպում է նաև անեծքի կիրառություն, որն առավելապես բնորոշ է խոսակցական լեզվին, մինչդեռ բնագրում կիրառված mi dispiace արտահայտությունը պատկանում է բառապաշարի գրական շերտին և թարգմանվում է՝ ցավում եմ կամ ինչ ափսոս: Ռուսերենում այդ արտահայտությունն ընդհանրապես բաց է թողնված:

Բայց չէ, բոլորն էլ հույսները կորցրած գյաղագյուղաներ էին... (էջ 10) // ...*ma no, erano certi disperati...* (p. 10) // ...*a то ведь всякая шантропа...* (с. 309):

Գյաղագյուղա բառը, որն ունի կրկնավոր կազմություն, և որի գյաղա բաղադրիչը նշանակում է ծառա (հնգ.), այնուհետև սինլորր, տմարդի, տականք և այլն³ հայերեն ժողովրդախոսակցական լեզվին բնորոշ միավոր է, ինչպես որ ռուսերեն թարգմանության մեջ шантропа բառը, որը ժողովրդախոսակցական, նախատական բառ է և նշանակում է некчемный, нигде не годный человек:

Նորակազմ բառեր ենթաբաժնում ներկայացվում են հայերեն թարգմանություններում տեղ գտած մի շարք բառային նորակազմություններ և

³ Է. Բ. Սդայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, էջ 248:

բառային պատճենումներ:

Ամեն մի կենդանի լեզվի բառապաշարը անընդհատ համալրվում է նոր բառերով: Այդ գործընթացը տեղի է ունենում հիմնականում երկու ճանապարհով՝ ներքին և արտաքին, որոնք թույլ են տալիս ըստ անհրաժեշտություն կազմելու կամ այլ լեզուներից փոխառելու նորանոր բառեր և դրանցով համալրել և հարստացնել բառապաշարը:

Թարգմանություններում նորակազմությունների մի մասը ածանցմամբ ստեղծված բառեր են. *աննրբախնդիր, senza scrupoli-щепетилен* (բոց. առանց խղճի, անխիղճ կամ առանց խղճի խայթի) բառի դիմաց, *անհարմարակեցիկ՝ disordinato-неустроенный* (անկարգ, թափթփված) ածականի դիմաց, *անընդմիջվող-постоянный՝* որը ընդհանրապես բացակա է բնագրում, *տեսարանայնություն-spettacolare-характер зрелища* և այլն, մյուս մասը՝ ածականի գերադրական աստիճան կազմող *ամենա* մասնիկով կազմված մի քանի բառեր, որոնք պայմանականորեն են դիտվում որպես նորակազմություն. *ամենավատթարացյուն՝ peggiore-неприятный* (ամենավատթար) ածականի դիմաց, որը թերի է, քանի որ, ինչպես հայտնի է, ըստ հայերենի քերականական կանոնների՝ ամենա և (ա)գույն ածանցների համատեղումը սխալ է⁴, *ամենաբուն խորքից՝ dal fondo stesso- из самой глубины* (էության խորքից) արտահայտության դիմաց, մեկ այլ մասը՝ բառապատճենումներ կամ համաբանական կազմություններ. *վերնաշխարհ-неземной мир* բառապատճենումը՝ կազմված բնագրի *sopramondo* գոյականի նմանակությամբ, ինչպես նաև *արտահայեցողություն՝ extroverso-экстроспективно*, որը հավանաբար կազմվել է *ներհայեցողություն* գոյականի համանմանությամբ:

Նորակազմությունների մյուս խումբը կերտված է բառաբարդման եղանակով. *եղջրածն- in forma di corna- согнутые как рога, միջերկրականցիներ-ropoli mediterranei-средиземноморские народы, գորշատերև-ulivi grigi-серебристо-серые, , հոգետառան-esitante-не решаясь, կարտոֆիլամամլիչ-schiacciarpatate-машинка для протирания картошки, կոնֆետաման-bomboniera di porcellana-бонбоньерка, շաքանկաճղ- marrone dorato- золотисто-каштанового цвета* և այլն:

Բարբառային և խոսակցական բառեր, առածներ և ասացվածքներ ենթաբաժնում քննվում են հատկապես «Չոչարա» վեպում տեղ գտած խոսակցական բառերը և արտահայտությունները (անեծքներ, լուտանքներ, օրհնանքներ), կրկնավոր բարդությունների կիրառման դեպքերը, կատարվում է առածների և ասացվածքների իմաստային վերլուծություն և բարբառային միավորների կիրառության մեկնաբանություն:

Բերենք համապատասխան մի քանի օրինակ.

- *Նորից քեզ լավ դրեց. հը՞ (էջ 211) // Toccato di nuovo eh? (p. 163) // А ведь он тебя задел. а? (с. 473):*

Խոսակցական լեզվում *դնել* նշանակում է *հարված հասցնել, ջախջախել*,

⁴ Յ. Ավետիսյան, Չ. Ջաքարյան, Հայոց լեզու, Չնաբանություն, Երևան, 2008, էջ 50:

ջարդել⁵ և չի մասնավորեցվում՝ հարված հասցնել ֆիզիկապես՝, թե՞ խոսքի միջոցով, մինչդեռ բնագրի՝ *toccato* ածականը մեկնվում է հետևյալ կերպ՝ *si dice di chi è stato colpito da una battuta pungente e appropriata*⁶ – կիրառվում է այն մարդու նկատմամբ, ում դիպուկ և տեղին պատասխան է տրվել: Ռուսերեն տարբերակում առկա *задеть* բայը նույնպես ունի բնագրին համարժեք *задеть самолюбие кого* - 1) *вызвать у кого-н. обостренное чувство самоуважения, гордости*, 2) *обидеть, уязвить, оскорбить* իմաստները:

Նա մեզ ծանոթացրեց իր քնքուշ, փոքր-ինչ թախճոտ *սևիկ-մևիկ* աղջկա հետ... (էջ 86) // ...ci presenta la figlia, *una brunetta dolce un po' triste*... (p. 67) // ...познакомил нас со своей дочерью, нежной и немного грустной *брюнеточкой*... (с. 372):

Փաղաքշական, մեղմացուցիչ և փոքրացուցիչ բնույթ է կրում հայերենում տեղ գտած *սևիկ-մևիկ* արտահայտությունը, որն ունի գուտ խոսակցական երանգ: Բնագրում հանդիպում ենք *una brunetta* որակմանը, որը հայերեն թարգմանվում է *թխահեր կին*, իսկ ռուսերեն՝ *брюнетка*, մինչդեռ թարգմանության մեջ կրկին կիրառված է փաղաքշական ձևը:

Սակայն բացի *սևիկներից՝ թափված էին նաև տարբեր տեսակ աղբուղիքի, պահածոների ժանգոտած տուփեր, քուրջուփալաւ*... (էջ 264) // *Ma oltre le ossa c'era anche parecchia mondezza, come dire scatolame arrugginito, stracci*... (p. 202) // Кроме костей, на земле валялось много всякого *хлама-тряпок*... (с. 515):

Straccio իր առաջնային իմաստով նշանակում է *կտոր, լաթ*, մինչդեռ հոգնակի թվով կիրառման դեպքում ձեռք է բերում *ցնցոտիներ, քրջեր* իմաստը: Հայերեն թարգմանության մեջ հանդիպում ենք *քուրջուփալաւ* բաղադրյալ բառին, որը, սակայն, արդի հայերենի բացատրական բառարանում չկա, այլ առկա է միայն *քուրջ* բառը իր՝ 1) *քրքրված, զգգված հագուստ*, 2) *հին շորի կտոր, լաթ, ցնցոտի*⁷ իմաստներով: Նմանատիպ երևույթի ենք հանդիպում նաև *աղբուղիքի* բառի դեպքում. թարգմանիչը միավորել է *աղբ* և *գիբի* բառերը՝ ստեղծելով բարդ բառ: Այսպիսով, կարող ենք միայն ենթադրել, որ Գ. Վիրապյանը միգուցե այդպիսի ընտրություն է կատարել՝ ելնելով վեպի ընդհանուր լեզվական ուղղվածությունից:

Սույն օրինակում հանդիպում ենք միաժամանակ և՛ օրինանքի, և՛ անեծքի կիրառման:

- *Սասված ձեզ հետ, եղբայրնե՛ր: Ես համարյա ինձանից անկախ մտածեցի. «Ձեզ էլ թող գրողը տանի ու գցի դժոխքը»* (էջ 273) // “*Dio sia con voi, fratelli. Pensai dentro di me, quasi mio malgrado: “E a voi altri il diavolo vi porti e vi trascini all’inferno”* (p. 208) // –*Бог вас благослови, братья мои. А я подумала про себя: “Ну а вас пусть дьявол возьмет и утащит в ад”*” (с. 523):

Երեք լեզուներում էլ օգտագործված են նույն՝ *սասված, սատանա* և *դժոխք* բաղադրիչներից կազմված արտահայտություններ, որոնք մեկնաբանության

⁵ Է. Բ. Աղայան, նշվ. բառարան, էջ 307:

⁶ Il Grande Dizionario Garzanti della Lingua Italiana, Milano, Garzanti Linguistica, 2006, p. 2620:

⁷ Է. Բ. Աղայան, նշվ. բառարան, էջ 1582:

կարիք չունեն:

Ստորև ներկայացնենք ասացվածքներով հարուստ մի օրինակ.

*Մի խոսքով, ինչպես արածում է ասվում. ալվելի լավ է կենդանի էջը, քան թե մեռած դոկտորը, կամ ալվելի լավ է էսօր ձուն, քան թե վաղը հավը, կամ մի ուրիշը. խոսք տալն ու խոսքը կատարելը վախկոտների գործն է (էջ 92) // *Eh, lo sapete il proverbio: meglio un asino vivo che un dottor morto; e anche quest'altro: meglio l'uovo oggi che la gallina domani; e ancora quest'altro: promettere e mantenere è da uomo vile* (p. 71) // *Вы знаете пословицу: лучше живой осел, чем мертвый доктор; или еще другую: лучше яйцо сегодня, чем курица завтра; а вот еще и одна: только трусы сдерживают обещания* (с. 377):*

Meglio un asino vivo che un dottor morto իտալական ասացվածքը Dizionario Garzanti di Italiano⁸ բառարանը մեկնաբանում է հետևյալ կերպ՝ *Non vale la pena di rovinarsi la salute con lo studio eccessivo՝ չարժե փչացնել առողջությունը՝ շատ բան իմանալու և սովորելու համար*, ինչպես նաև իտալերենի բառապաշարում կարող ենք հանդիպել *E' meglio vivere come uno stupido che morire gentile* (բոզ. *ալվելի լավ է ապրել հիմարի պես, քան մահանալ բարեկիրթ*): Հայերեն թարգմանության մեջ ականատես ենք լինում ասացվածքի բառացի թարգմանությանը, այսինքն՝ իտալերենի բաղադրիչները բառացի փոխարինվել են հայերեն համարժեքներով՝ պահպանելով բնագրի կառուցվածքը, և ուստի հայերենում այդ ասացվածքը չունի և ոչ մի իմաստ: Առավել ուշադրության է արժանի *dottore* բառի թարգմանությունը. իր առաջնային իմաստով այն նշանակում է *բժիշկ*, օրինակ՝ *chiamare il dottore-բժիշկ կանչել*, իսկ որպես երկրորդ իմաստ՝ *la persona che ha conseguito una laurea – քարձրագույն կրթություն (դիպլոմ) ունեցող անձնավորություն* և օգտագործվում է գերազանցապես որպես հապավում մասնագիտություն ցույց տվող գոյականների առջև, օր.՝ *dottore in medicina*, որը նկարագրական ձևով կթարգմանենք *քարձրագույն բժշկական կրթություն ունեցող անձնավորություն*: Սույն իմաստն այս բառին անցել է լատիներենից, որում ունեցել է՝ *doctōre –docēre*⁹ ձևը, և նշանակել է համապատասխանաբար *դասատու* և *սովորեցնել*: Ռուսերեն թարգմանության մեջ այնպես, ինչպես հայերենում, վերը հիշատակված այս ասացվածքը թարգմանվել է բառացի՝ *лучше живой осел, чем мертвый доктор* արտահայտությամբ, որը, ինչպես հայերեն թարգմանությունում, սխալ է: Մինչդեռ ճիշտ և տեղին կլիներ կիրառել՝ *Лучше дураком жить, чем ученым помереть*¹⁰ տարբերակը, որը միանշանակ արտացոլում է բնագրում տեղ գտած ասացվածքի իմաստը: Պետք է նշել, որ հայերենում համարժեք մոտավոր միտքն արտահայտում են հետևյալ ասացվածքները. *խելք ու դարդ չունեցողը էրզան (երկար) կապրի* կամ հետևյալը՝ *շատ բան իմանա, շուտ կձերանաս* :

⁸ Dizionario Garzanti, նշվ. բառարան, էջ 787:

⁹ Il Nuovo Etimologico, Dizionario etimologico della lingua italiana, Bologna, 1999, p. 495:

¹⁰ Т.З.Черданцева, Я.И.Рецкер, Г.Ф.Зорько, Итальянско-русский фразеологический словарь, М., 1982, с. 77:

Երկրորդ՝ «**Բառիմաստային թարգմանություն**» գլուխը, նվիրված է վեպերի հայերեն և ռուսերեն թարգմանությունների բառապաշարի իմաստաբանական քննությանը, դարձվածային միավորների բառիմաստային օգտագործման առանձնահատկությունների ուսումնասիրությանը, թարգմանության ընթացքում գործածվող որոշ բառերի ուղիղ և փոխաբերական իմաստով կիրառություններին:

Հայերեն թարգմանություններում հանդիպում է ոչ միայն սովորական (ընդունված է ասել՝ լիիմաստ), այնպես և սպասարկու բառերի գործածության դեպքեր¹¹: Նման բառերը, երբ համեմատում ենք իտալերեն բնագրի, ինչպես նաև ռուսերեն թարգմանությունների համապատասխան միավորների հետ, նկատում ենք մի շարք տարբերություններ: Դրանք որոշ դեպքերում պայմանավորված են այդ լեզուների բառապաշարի տարբերություններով, ինչպես նաև թարգմանիչների (տվյալ դեպքում հայերեն թարգմանիչ) լեզվական հակումներով և նախասիրությամբ:

Քննարկենք մեկ-երկու օրինակ.

Ալվա ղ, լավ ժամանակներ էին, երբ... (էջ 3) // Ah, i bei tempi di quando... (p. 5) // Хорошие то были времена, когда... (с. 303):

Այս օրինակում տեղ գտած *ալվա ղ* ձայնարկությունը, ինչպես և լիիմաստ բառերը, ունի բառային իմաստ, որը, սակայն, առարկայական չէ, այլ վերաբերական, կոնկրետ չէ, այլ ընդհանուր և եղանակավորող: Բերենք մեկ այլ օրինակ:

Է՛հ, այս գիշեր, ես կվճռեմ (էջ 69) // Be', stanotte decideremo (p. 54) // Сегодня ночью я подумаю и решу (с.358):

Ի դեպ, պետք է նշել, որ և՛ առաջին, և՛ երկրորդ օրինակում ռուսերեն թարգմանության մեջ բացակայում են ձայնարկությունները, և նախադասության միտքը կարծես թե գուրկ է մնում հուզարտահայտչական երանգավորումից: Առաջին օրինակում *ալվա ղ* ձայնարկությունը, որը նշանակում է «*ափսոս, եղուկ*», արդեն իսկ ընթերցողին հուշում է, թե մտքի ինչ զարգացում է պետք ակնկալել հետագայում: Իսկ երկրորդ օրինակում է՛հ ձայնարկությունը օժտված է տարբեր իմաստներով՝ արհամարհանք, անտարբերություն, անուշադրություն, փստսանք, դժգոհություն, զայրույթ և այլն. այս պարագայում արտահայտում է *ակամա համակերպվելու, հանդուրժելու* իմաստ: Նույն երանգավորումը կարող ենք նկատել նաև բնագրում, որում հեղինակը օգտագործել է *bene* մակբայի կրճատ՝ *bé* տարբերակը:

Սպասարկու բառերով թարգմանությունների համեմատությամբ սովորական իմաստով բառերի գործածությունը հիշյալ երկերի հայերեն թարգմանություններում համեմատաբար շատ է, մինչդեռ դարձվածաբանորեն կապված իմաստով կիրառման դեպքերը սակավաթիվ են: Օրինակ՝

Ճարս կտրված վառեցի մոմը և... (էջ 58) // Alla fine accesi la candela e... (p. 46) //

¹¹Ա. Մ. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, (հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն), Երևան, 1989, էջ 117:

...я, наконец, зажгла свечку и наклонилась над кроватью... (с. 349):

Ճար բառը, որը նշանակում է *միջոց, հնարք, օգնություն, դեղ, դարման, ուժ, կարողություն և ատողություն*, առանձին գրեթե չի գործածվում, նրա իմաստը առավել լավ և ճշգրիտ արտացոլվում է *ճար անել, ճարս ի՞նչ, ճարը կտրել, հասնել, ճար ու ճուր անել, ճար ու ճրագ, ճարը տեսնել և ճար չկա* արտահայտություններում¹²: Մինչդեռ բնագրում հանդիպում ենք *alla fine` վերջում* և ռուսերենում՝ *наконец* տարբերակները, որոնք դարձվածային միավորներ չեն:

...սուվի ժամանակ փողը ոչ մի արժեք չունի, դրա համար էլ իրենց հոր գինը դնում էին մթերքների վրա (էջ 60) // ...i soldi in tempo di carestia non servono a niente e mi prendevano per il collo (p. 47-48) // ...*деньги в голодное время теряют свою стоимость, поэтому и драли втридорога* (с. 350):

Նոր գինը օգտագործվում է *հոր գինը վրան դնել* բայական կապակցության մեջ և նշանակում է *շատ թանկ գնով վաճառել*: Այս օրինակում կարելի է նկատել իմաստի շեղում թե՛ հայերեն և թե՛ ռուսերեն թարգմանություններում: Ուսումնասիրելով օրինակները՝ կտեսնենք, որ իտալերեն *prendere/pigliare per il collo* արտահայտությունը նշանակում է *ենթարկել* կամ *դնել որևէ մեկին ծանր տնտեսական վիճակի մեջ*, հայերեն կարելի էր թարգմանել *կոկորդից բռնել*, որը նշանակում է *մեկից մի բան պահանջել, ստիպել, հարկադրել, նեղել*, իսկ ռուսերեն այն թարգմանվում է *взять за горло; схватить за глотку* կապակցությամբ: Հայերենի *հոր գինը դնել* նշյալ տեքստում կրում է ընդհանրական իմաստ. այն կարելի է կիրառել՝ նշելու ընդհանրապես ապրանքի թանկությունը, մինչդեռ այդտեղ հեղինակը նպատակ է ունեցել ընթերցողին փոխանցել այն միտքը, որ *սուվի ժամանակ փողը ոչ մի արժեք չունի, և վաճառողները օգտվում էին առիթից* կամ *ստիպում էին գնել ապրանքը՝ ելնելով անելանելի իրավիճակից*: Նույնը կարելի է ասել նաև ռուսերենի՝ *драть втридорога* արտահայտության մասին, որն իտալերենում ունի իր լիարժեք՝ *scorticare vivo* թարգմանությունը: Կարելի է ենթադրել միայն, որ թարգմանիչը նախընտրել է գործածել *հոր գինը դնել* դարձվածքը, որը բառապաշարի ժողովրդախոսակցական շերտից է:

Ինչպես սահմանում է Էդ. Բ. Ադայանը, «փոխաբերությունը տվյալ բառի գործածությունն է այնպիսի առարկաների (երևույթների, հատկանիշների և այլնի) վերաբերությամբ, որոնք չեն մտնում նրա ուղղակի իմաստի մեջ, կամ ավելի պարզ՝ փոխաբերությունը բառի գործածությունն է մի այլ բառի իմաստով¹³»: Միաժամանակ նշվում է, որ, «ըստ իրենց տարածվածության և իմաստային զարգացման՝ փոխաբերությունները լինում են երեք կարգի. ա) *անհատական-ստեղծագործական* կամ *հեղինակային*, բ) *գործուն պատկերավոր* կամ *ընդհանրական պատկերավոր*, գ) *ավարտուն կամ մարած*¹⁴»: Այս երեք կարգերից

¹² Ա. Մ. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երևան, 1967, էջ 422:

¹³ Էդ. Բ. Ադայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, էջ 50:

¹⁴ Էդ. Բ. Ադայան, նշվ. աշխ, էջ 51:

բացի՝ առանձնացվում են նաև *բառային* կամ *մակերեսային փոխաբերություններ* և *խորքային* կամ *կապակցական փոխաբերություններ*¹⁵:

Նման դասակարգման խմբավորման հիման վրա էլ անդրադառնում ենք հայերեն և ռուսերեն թարգմանություններում երևան եկած բառերի փոխաբերական իմաստով գործածություններին:

Մի խոսքով, դա մի ծանր խաչ էր ինձ համար... (էջ 8) // Insomma era una gran croce... (p.8) // Одним словом это был для меня тяжелый крест... (с. 307):

Խաչ բառը իր ուղղակի իմաստով նշանակում է քրիստոնեական կրոնի խորհրդանիշ և պաշտամունքի առարկա, իսկ փոխաբերական իմաստով *խաչ* կամ *ծանր խաչ լինել* նշանակում է *ծանր պարտականություն, վիճակ, հոգս*: Այս արտահայտությունը անմիջականորեն կապվում է Քրիստոսի հետ: Բնագրում և ռուսերեն թարգմանության մեջ նույնպես տեղ են գտել *խաչ* բառի փոխաբերական իմաստով տարբերակները:

...հացագործը, անասելի հիմար, կեղտոտ լեզվով մի մարդ, որին... (էջ 32) // ... fornaio, un uomo stupido da non darsi e sempre molto greve nel linguaggio, che... (p. 25) // ... пекарь, человек грубый и невозддержанный на язык, я его терпеть не могла (с. 327):

Կեղտոտ լեզու կապակցության մեջ նկատելի է երկու բաղկացուցիչ միավորի փոխաբերական կիրառում. նախ՝ *կեղտոտ*, որն այս դեպքում նշանակում է *անախորժ, անպարկեշտ, նենգ*, և *լեզու*՝ որպես *միտքը բառերով արտահայտելու եղանակ, բնույթ*: Բնագրում *greve nel linguaggio* արտահայտությունը փոխաբերական իմաստ չի արտահայտում, այն պարզապես կարելի է թարգմանել որպես *կոպիտ խոսելած*: Չնայած որ իտալերենում գոյություն ունի *mala/cattiva lingua* — *կեղտոտ, չար լեզու*. այն լայնորեն կիրառվող արտահայտություն է: Նույնը կարելի է ասել ռուսերեն թարգմանության մեջ տեղ գտած *невозддержанный на язык* արտահայտության համար, որը ևս ունի իր *злой/ехидный язык* փոխաբերական իմաստով տարբերակը:

Հանդիպում են անհատական ստեղծագործական կամ հեղինակային փոխաբերության դեպքեր, որոնց անդրադառնում ենք առանձին: Օրինակ՝

Այդպես էլ արհնք՝ նստելով կամրջի ականջի մոտ գտնվող քարե նստարանին (էջ 75) // Non restava dunque che aspettare e così facemmo, sedendoci su un banco di pietra che stava all'imboccatura del ponte (p. 59) // Нам не оставалось ничего другого, как ждать, что мы и сделали, усевшись на каменную скамейку у моста (с. 363):

Ականջ բառի ուղղակի իմաստը *լսողության գործարանն է, լսելիքը*, իսկ փոխաբերական իմաստներն են՝ 1) *լսելու ընդունակություն, լսողություն*, 2) *անհրաժեշտ տեղեկություններ հավաքող ու գաղտնաբար յուրայիններին հայտնող մարդ, լրտես, իրազեկիչ*¹⁶: Հայերենի բացատրական բառարաններում այս բառի նման փոխաբերական իմաստ չենք գտնում, ինչպես նաև տվյալ փոխաբերական

¹⁵ Էդ. Բ. Աղայան, նշվ. աշխ., էջ 55-58:

¹⁶ Է. Բ. Աղայան, նշվ. բառ., էջ 15:

կիրառմանը, թեկուզ բնագրում օգտագործված *imboccatura` մուտք, անցք, բացվածք, գետաբերան, բերան (սրինգ)*¹⁷ իմաստին մոտ բառ: Հավանաբար միակ բացատրությունն այն է, որ *ականջ* բառի փոխաբերական իմաստներից մեկն է *ականջի նմանություն ունեցող զանազան իրեր, առարկաներ կամ դրանց մասեր*, և հետևաբար կարելի է ենթադրել, որ կամրջի այդ սկզբնամասը նման էր իր ձևով ականջի, կամ էլ պարզապես թարգմանիչը դիմել է անհատական ստեղծագործական կամ հեղինակային փոխաբերության կիրառման պրակտիկային: Ռուսերեն թարգմանության մեջ *all'imboccatura* արտահայտությունն ընդհանրապես թարգմանված չէ:

Երրորդ՝ «**Դարձվածային միավորների թարգմանություն**» գլուխը համեմատաբար ծավալուն է. երեք եկթաբաժնում քննվում են անվանական, բայական և այլ խոսքի մասերի պատկանող բաղադրիչներով դարձվածային միավորների կառուցվածքային և իմաստային առանձնահատկությունները:

Անվանական բաղադրիչներով դարձվածային միավորների գերադաս անդամը գոյական է կամ փոխանվանաբար առնված որևէ խոսքի մաս՝ լրացված մեկ կամ մի քանի բառով: Դրանք հաճախ ներկայանում են *գոյական (եզակի սեռական)+գոյական (եզակի ուղղական հայցական)* կառույցով, ինչպես՝ *գայլի ախորժակ- malattia del lupo- волчий аппетит, ախորժակիդ քացախ- mani in alto - как бы не так, այքիս լույսի նման- la luce degli occhi-светом своих очей*, այնուհետև՝ *գոյական (եզակի ուղղական-հայցական)+գոյական (եզակի ուղղական-հայցական)* կառուցվածքով, ինչպես՝ *երես առ երես- naso a naso-лицом к лицу, ածական (որակական) + գոյական (եզակի ուղղական)* ինչպես՝ *բարի քամի- buon vento-добрый ветер, մի քոռ կոպեկ անզավ չարժի - non valeva un fico- не стоило ни ломанного гроша*:

Ինչպես նշվում է ժամանակակից հայերենի դարձվածային միավորներին նվիրված աշխատություններում, բայական դարձվածային միավորներն, ըստ բաղադրիչների մասնակցության քանակի, լինում են *երկանդամ, եռանդամ* և *բազմանդամ*, որոնք ներկայացնում են կառուցվածքային զգալի տարբերություններ¹⁸:

ա) Երկանդամ բայական դարձվածային միավորների գերադաս անդամը անորոշ դերբայն է, որը օժտված է տարբեր խոսքի մասերով ծավալվելու հատկանիշներով: Երկանդամ կառույցները բայական դարձվածքների համակարգում թվով ավելի շատ են ու ամենամեծ կիրառությունն ունեն. պատճառը կարճ ու հեշտ վերարտադրելի լինելն է: Օրինակ՝

...Snutunawqhinun, որը փողի համար հոգին էլ կծախելը (էջ 122) // ...Tommasino che per i soldi come si dice, avrebbe fatto persino carte false (p. 95) // ...Томмазино, готовый

¹⁷ Հ. Վահան վրդ. Օհանեան, Բառարան իտալերեն-հայերեն, Վենետիկ, Ս. Ղազար, 1995, էջ 346:

¹⁸Խ. Գ. Բաղիկյան, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Երևան, 1986, էջ 158-259:

за деньги *совершить даже подлог...* (с. 401):

Հոգին ծախել կամ (հոգին կորցնել) դարձվածային միավորը լայն կիրառում ունի հայերենում և նշանակում է «մեղք գործել, անարդարություն անել, դավաճանել որևէ գաղափարի կամ մասունք»¹⁹: Նույն իմաստը արտահայտված է նաև բնագրում, չնայած որ դարձվածային միավորի կազմում *հոգի* բառի փոխարեն առկա է *խաղաքարտ* բառը, և հայերեն այդ արտահայտությունը բառացի կթարգմանվեր *կեղծ խաղաքարտեր խաղալ*, որը իտալերեն բացատրվում է հետևյալ կերպ. *դիմել յուրաքանչյուր քայլի՝ նպատակին հասնելու համար*, և իր իմաստով լիովին համապատասխանում է հայերեն թարգմանությանը: Սակայն ռուսերեն *подлог* բառը նշանակելով 1) *подделка с целью обмана*, 2) *подложные документы, вещи*, հայերենում՝ *կեղծիք* կամ *խարդախություն*, սույն համատեքստում, իհարկե, հասկանալի է իմաստային տեսակետից, սակայն առավել նպատակահարմար կլիներ այն թարգմանել *пойти на все ради кого-либо* տարբերակով, մանավանդ որ *fare carte false per qd* ռուսերեն հենց այդպես էլ թարգմանվում է:

Դարձվածքների մի զգալի մասը կազմված է մարմնի մասերի անվանումներով և բայերով: Այսպես, *աչք, ականջ, գլուխ, քիթ, բերան, սիրտ, ձեռք, երես, լեզու* և այլ բառերը՝ ուղիղ և թեք ձևերով, եզակի և հոգնակի թվով բայական բաղադրիչների հետ ժամանակակից հայերենում կազմում են բազմաթիվ դարձվածքներ: Օրինակ՝
- *Ի՞նչ ես գլուխ դրել կնկա հետ (էջ 67) // “Sono femmine, non ti confondere”* (p. 52)
// Не связывайся с бабой (с. 356):

Տարբեր իմաստային երանգներով հարուստ՝ *գլուխ դնել* դարձվածային միավորը պարփակում է այնպիսի իմաստներ, ինչպիսիք են՝ «մի տեղ հանգստանալ, օթևանել, պառկել, մեկով զբաղվել, մեկի հետ ասել-խոսել, մեկի հետ հարաբերություն ունենալ, մեկի հետ լեզու դնել, հարմարվել, ուշադրություն դարձնել, հետևել, հետամուտ լինել, խոսքի բռնվել, վիճել, կովել և այլն»²⁰, մինչդեռ բնագրում *confondersi* բառն է օգտագործված, որը նշանակում է *խառնվել, խճճվել, շփոթեցնել* և միայն *non ti confondere* տարբերակով ստանում է *գլուխ մի՛ դիր* դարձվածային միավորի արժեք: Նույնը նկատում ենք ռուսերեն *связываться* բայի դեպքում: Այսպիսով, նկատելի է, որ և՛ բնագրում, և՛ ռուսերեն տարբերակում բացակայում են դարձվածային միավորները:

Ճամպրուկ թոցնեիր ինչ է որ, աչքը թարթեցիր, էլ տերը չես (էջ 13) // ...una valigia si fa presto a rubarla (p. 11) // Много ли надо чтобы украсть чемодан! (с. 310):

Աչքը թարթեցիր կամ *աչքը թեքել (աչքը թեքեցիր-բանիդ տերը չես (Հովհաննես Թումանյան)*²¹ նշանակում է «ուշադրությունը մի բանից հեռացնել, աչքը շեղել», որը դարձվածային միավոր է: Բնագրում *una valigia si fa presto a rubarla*

¹⁹ Ա. Մ. Սուքիասյան, Ս. Ա. Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, 1975, էջ 363:

²⁰ Ա. Մ. Սուքիասյան, Ս. Ա. Գալստյան, նշվ. բառարան, էջ 157:

²¹ Ա. Մ. Սուքիասյան, Ս. Ա. Գալստյան, նշվ. բառարան, էջ 42:

արտահայտությունը կարելի էր թարգմանել «Ճամայրուկ գողանալը ի նչ է որ», իսկ ռուսերեն տարբերակը՝ “Много ли надо чтобы украсть чемодан”, միանգամայն համապատասխանում է բնագրում տեղ գտած արտահայտությանը, որը, ինչ խոսք, դարձվածք չէ:

բ) Բայական եռանդամ դարձվածային միավորների կիրառությունը հայերեն թարգմանություններում ևս քիչ չէ: Դրանց գերադաս անդամը նույնպես անորոշ դերբայն է, որը սովորաբար վերջադաս է: Նման եռանդամ կառույցներում նույնպես մեծ տեղ են գրավում հարադիր բայերը: Բերենք մի քանի օրինակ:

- *Էլ ի նչ կար դրա մեջ, որ արյունը գլուխդ տվեց (էջ 376) // Ma non arrabbiarti... (p. 286) // Успокойся, Чезира... (с. 606):*

Նախ նշենք, որ *արյուն* գոյականով ժամանակակից հայերենում կան բազմաթիվ և բազմաբնույթ դարձվածային միավորներ, որոնք ունեն օգտագործման լայն շրջանակ: *Արյունը գլխին տալ* (կամ՝ *գարկել, գարնել, թռչել, խուժել, խփել, լինել, խաղալ, տալ, ցատկել*) նշանակում է «գայրույթից ինքն իրեն ուտել, մոլեգնել, սաստիկ գայրանալ, նաև՝ հուզվել, ինքնամոռացության մեջ ընկնել»²² և այլն: Հայերեն տարբերակում դարձվածային միավորի օգտագործումը ընթերցողին անմիջապես փոխանցում է *սաստիկ բորբոքվելու* և *կատաղելու* պատկերացումը, մինչդեռ բնագրում հեղինակը կիրառել է *ma non arrabbiarti* հրամայական եղանակով կազմված արտահայտությունը, որը պարզապես նշանակում է *մի՛ գայրացիր*, իսկ ռուսերենում հանդիպում ենք *գայրանալ, կատաղել* բայերին հակահիշ *успокойся* բային:

Այդ խոսքերի վրա փախստականների լեզուն կապ ընկավ... (էջ 223) // Gli sfollati ammutolirono a queste parole... (p. 172) // При этих словах беженцы остоленели (с. 482):

Լեզուն կապ ընկնել (կամ *կապվել*) դարձվածային միավորն ունի հետևյալ իմաստները՝ «չկարողանալ պատասխան տալ՝ պատասխանել, չկարողանալ խոսել, խոսելու ընդունակությունից զրկվել, պապանձվել»²³, և կարող է հանդիպել տարբեր համատեքստերում: Մորավիայն օգտագործել է *ammutolire* բայը, որի հիմքում ընկած է *muto՝ համր* ածականը, որը ևս նշանակում է «հանկարծակի լռել, մնջանալ, պապանձվել, համրանալ, լեզուն կապվել»²⁴, որը, ի տարբերություն հայերենի, դարձվածային միավոր չէ: Ռուսերենում *остоленеть* բայը նշանակում է՝ *потерять способность двигаться, замереть в следствие душевного потрясения*, բայց ոչ *онеметь, замолчать* կամ *потерять дар речи*, ինչպես և պետք է թարգմանվեր: Ուստի բերված օրինակում նկատում ենք իմաստային շեղում:

գ) Բայական քառանդամ կազմությունները, թեև թվով չեն գերազանցում եռանդամներին, բայց բաղադրիչների բազմազանությամբ և կառուցվածքային առանձնահատկություններով իմաստային ավելի հարուստ հատկանիշներ են

²²Ա. Մ. Մուքիսայան, Ա. Ա. Գալստյան, նշվ. բառարան, էջ 90:

²³Ա. Մ. Մուքիսայան, Ա. Ա. Գալստյան, նշվ. բառարան, էջ 267:

²⁴Հ. Վահան վրդ. Օհանեան, նշվ. բառարան, էջ 47:

հանդես բերում: Բերենք մի քանի օրինակ:

Է՛հ, հայտնի բան է. կռվում չիր ու չամիչ չեն բաժանում (էջ 371) // Eh, si sa, la guerra è la guerra (p. 283) // Известное дело: война-это война (с. 601):

Չամիչ բաժանել կամ չիր ու չամիչ չեն բաժանում դարձվածային միավորը մեկնաբանվում է հետևյալ կերպ՝ «ինչ-որ հաճելի զբաղմունք չէ, փչավ չեն բաժանում» և բառարանում հանդիպում ենք մեր օրինակին ամբողջությամբ համարժեք մի օրինակի՝ *-ոչինչ... կռիվ է, իսկ կռվի մեջ, ինչպես սաված է, չիր ու չամիչ չեն բաժանում (ՄՂ, Վերջինը)*²⁵: Բնագրում կիրառված *la guerra è la guerra* արտահայտությունը պարզապես թարգմանվում է *պատերազմը պատերազմ է*, որը դարձվածք չէ: Նույնը կարելի է ասել նաև ռուսերենի մասին, սակայն հարկ է նշել, որ առավել գործածելի է *на войне как на войне* տարբերակը:

...ինչպես նա, որ հանկարծ գգում է, թե ինչպես է հողը փախչում իր ոտքերի տակից (էջ 423) // ...come di chi, tutto ad un tratto, si senta mancare il terreno sotto i piedi (p. 15) // ...человек, неожиданно почувствовавший, что земля уходит у него из под ног (с. 5):

Մեկի ոտքի տակի հողը կորչել/ոտքերի տակից հողը փախչել նշանակում է՝ «ամուր, հաստատուն հիմքը՝ հենարանը չքանալ՝ երերալ»²⁶: Այս օրինակում հանդիպում են ամբողջովին նույն կառուցվածքն ունեցող և իմաստային տեսակետից միմյանց համարժեք դարձվածային միավորներ:

...այլապես աշխարհում քարը քարի վրա չի մնալ (էջ 54) // ...se ci sono tutto va a scatafascio (p. 43) // ...иначе весь мир полетит вверх тормашками (с. 346):

Քարը քարին (կամ *քարի վրա*) *չմնալ* նշանակում է «ավերվել, հիմնահատակ կործանվել»²⁷: Բնագրի *andare a scatafascio/catafascio* դարձվածային միավորը հայերեն կթարգմանվի՝ *փռչի դառնալ, հող ու մոխիր դառնալ*, որը հումանիշ է թարգմանության մեջ տեղ գտած դարձվածային միավորին: Ռուսերեն տարբերակի՝ *полететь вверх тормашками* արտահայտությունն ունի զուտ խոսակցական բնույթ և նշանակում է *опрокидываться через голову; кувыркком, находиться в опрокинутом положении; вверх ногами*, մինչդեռ իտալերենի *andare a scatafascio/catafascio* ռուսերեն թարգմանվում է՝ *пойти прахом*, որն էլ իր հերթին նշանակում է՝ *погибнуть, уничтожиться*: Ուստի կարող ենք նկատել, որ ռուսերեն օրինակի դարձվածային միավորն արտացոլում է բնագրից իմաստով տարբեր իրավիճակ, քանի որ, ինչպես արդեն տեսանք, *пойти прахом* և *полететь вверх тормашками* արտահայտությունները տարբեր իմաստներ են արտահայտում:

դ) Ինչպես նշեցինք, բայական բաղադրիչներով դարձվածային միավորները բազմազան են, և հայերենում հանդիպում են նաև չորսի, նաև հինգ անդամ ունեցող կառույցներ: Հայտնի է նաև, որ դարձվածային միավորի բաղադրիչների

²⁵Պ. Ս. Բեդիրյան, Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Երևան, 2011, էջ 1068:

²⁶Պ. Ս. Բեդիրյան, նշվ. բառարան, էջ 786:

²⁷Ա. Ս. Սուքիասյան, Ս. Ա. Գալստյան, նշվ. բառարան, էջ 590:

ավելանալու դեպքում պակասում է նման միավորների թիվը: Նկատելի է, որ հնգանդամ դարձվածային միավորներում հանդես են գալիս երկու անորոշ դերբայ, որոնց շնորհիվ առաջանում են մեկից ավելի կապակցություններ, ընդ որում մի կապակցությունը պայմանավորված է լինում մյուսով, այլ կերպ ասած՝ բխում է նրանից: Օրինակ՝

...անգլիացիների գալու հետ մենք յուր ու մերրի մեջ լողալու ենք (էջ 89) // ... una volta arrivati gli inglesi, avremmo tutti nuotato nella grascia (p. 69) // ...с приходом англичан все будут кататься как сыр в масле (с. 374):

Յուր ու մերրի մեջ լինել (խոսկց. լվլվալ) նշանակում է «շատ հարուստ ու երջանիկ»²⁸: Բնագրի *nuotare nella grascia* դարձվածային միավորը, ի տարբերություն հայերեն տարբերակի, կազմված է միայն *յուր* բաղադրիչից, մինչդեռ ռուսերեն համարժեքն է *как сыр в масле кататься*²⁹, *сыр* բաղադրիչը չկա ո՛չ բնագրում և ո՛չ էլ հայերենում, ուստի կարող ենք նկատել, որ հարստության և առատության գաղափարը տարբեր մշակույթներում արտահայտվում է յուրովի՝ համաձայն սովորույթների և կենսակերպի:

- Մենք, ըստ երևույթին, ինչպես ասում են, մրից դուրս ենք եկել. ընկել մրջուրը (էջ 317) // Mi sa che siamo cascati come si dice, dalla padella alla brace (p. 241) // -*Мы, кажется, попали из огня да и в полымя* (с.558):

Մրի մրջից ելնել մրջուրը մտնել նշանակում է «փորձելով վատ վիճակից դուրս գալ ավելի խայտառակ դրության մեջ ընկնել»³⁰: Այս օրինակում կարելի է նկատել բնագրի և հայերեն, ինչպես նաև ռուսերեն թարգմանությունների մեջ գործածված դարձվածային միավորի իմաստային կատարյալ համապատասխանություն, չնայած որ *մուր* և *մրջուր* բաղադրիչներին իտալերենում համապատասխանում են *padella* (թավա) և *brace* (ածուխ) տարբերը, իսկ ռուսերենում առկա է *огонь* և *полымя* բաղադրիչները: *Cadere dalla padella nella brace* կարելի է թարգմանել նաև՝ *անձրևից փախչել, ջուրն ընկնել*³¹:

Այլ խոսքի մասերի պատկանող բաղադրիչներով դարձվածային միավորներից առանձնացրել ենք մակբայական և եղանակավորող դարձվածային միավորները:

ա) Հայերենում մակբայներով կազմված դարձվածային միավորները սակավաթիվ են: Մակբայական կառույցների իմաստային առանձնահատկությունն այն է, որ որևէ առարկայի, գործողության հատկանիշը համեմատում են մեկ այլ առարկայի գործողության հատկանիշի հետ: Հայերեն թարգմանություններում հանդիպում ենք հետևյալ օրինակներին:

Կարճ ասած, աշխատում էի այնքան էլ չմտածել Էմիլյայի մասին (էջ 451) // *Ossia cercando di non riflettere troppo né sul contegno di Emilia* (p.47) // *ИНЫМИ СЛОВАМИ, я старался поменьше думать о Эмили* (с.16):

²⁸Պ. Ս. Բեդիրյան, նշվ. բառարան, էջ 977:

²⁹ Թ. Յ. Черданцева, Я. И. Рецкер, Г. Ф. Зорько, նշվ. բառարան, էջ 486:

³⁰Ս. Մ. Սուքիասյան, Ս. Ա. Գալստյան, նշվ. բառարան, էջ 445:

³¹Ս. Մ. Սուքիասյան, Ս. Ա. Գալստյան, նշվ. բառարան, էջ 22:

Վարճ ասած՝ նշանակում է «համառոտակի՝ առանց մանրամասնությունների մեջ խորանալու»³², իսկ բնագրի *ossia* շաղկապն ունի *և կամ, այսինքն*³³ իմաստները: Այստեղ ռուսերեն տարբերակը համարժեք է բնագրին:

Այդ բնակարանը, ճշմարիտն ասած... (էջ 433) // Quest'appartamento, non era davvero né grande né lussuoso... (p. 27) // Квартира эта, по правде говоря... (с. 387):

Ճիշտն ասած կամ եթե ճիշտը կուզեք, ինչպես նաև ճիշտը որ ասենք նշանակում են, որ «ասածը ճշմարտություն է, և խոսվում է անկեղծ»³⁴ և համարժեք է բնագրին և ռուսերենին:

Այս ծովակալը արևի նման մի գեղեցիկ աղջիկ է ունեցել... (էջ 249) // Quest'ammiraglio aveva una figlia bella come una stella... (p. 191) // У адмирала была дочь необыкновенной красоты... (с. 503):

Արեգակի նման նշանակում է *չբնաղ*,³⁵ և ավելի քան տեղին է կիրառված աղջկա գեղեցկությունն արտահայտելու համար, մինչդեռ բնագրում օգտագործված է *stella* (աստղ) բառը, որը նույնպես արտահայտում է *պայծառ, փայլուն, գեղեցիկ* իմաստները, մինչդեռ ռուսերենում բացակայում է որևէ համեմատություն, և դրա փոխարեն կիրառված է ածական:

բ) Հայերենի դարձվածաբանական համակարգում համեմատաբար փոքր խումբ են կազմում եղանակավորող դարձվածային միավորները: Նրանք ունեն հուզարտահայտչական բնույթ և իրենց իմաստով, ձևաբանական և շարահյուսական առանձնահատկություններով տարբերվում են անվանական և բայական արժեք ունեցող դարձվածային միավորներից: Եղանակավորող դարձվածային միավորների միջոցով խոսքի նկատմամբ կարելի է արտահայտել տարբեր վերաբերմունք, ինչպիսին են՝ *գոհունակություն, գովասանք, բարենադրություն, երդում, հիացմունք, ափսոսանք, զարմանք* և այլն³⁶: Ա. Մորավիայի վեպերում ևս նման կազմությամբ դարձվածային միավորներ շատ քիչ են կիրառվում: Բերենք մեկ-երկու օրինակ:

Աստված ձեզ հետ, եղբայրնե՛ր (էջ 273) // Dio sia con voi, fratelli (p. 208) // Бог вас благослови, братья мои (с.523):

Մեկ այլ օրինակում առկա է անեծքի դարձվածային օգտագործում:

«Ձեզ էլ թող գրողը տանի ու զգի դժոխքը» (էջ 273) // “E a voi altri il diavolo vi porti via e vi trascini all’inferno” (p.208) // “Ну а вас пусть дьявол возьмет и утащит в ад” (с. 523):

Այստեղ թե՛ բնագրում և թե՛ թարգմանվող լեզուներում հանդիպում են *գրողը* կամ *աստանա* բաղադրիչով կազմված դարձվածային միավորներ:

³² Ա. Մ. Մուքիսայան, Ս. Ա. Գալստյան, նշվ. բառարան, էջ 316:

³³ Հ. Վահան վրդ. Օհանեան, նշվ. բառարան, էջ 432:

³⁴ Ա. Մ. Մուքիսայան, Ս. Ա. Գալստյան, նշվ. բառարան, էջ 402:

³⁵ Պ. Ս. Բեդիրյան, նշվ. բառարան, էջ 180:

³⁶ Խ. Գ. Բաղիկյան, նշվ. աշխ., էջ 282-283:

Չորրորդ՝ «Փոխառյալ բառերով եվ օտարաբանություններով թարգմանությունն», գլուխը ներկայանում է չորս ենթաբաժնով:

Փոխառյալ բառերի գործածությունը հայերեն թարգմանության մեջ ենթաբաժինը քննում է վեպերի հայերեն թարգմանություններում տեղ գտած անմիջական և միջնորդական փոխառությունները³⁷:

Ինչպես Ա. Սուքիասյանն է գրում, «ձագումնաբանական տեսակետից ժամանակակից հայերենի բառապաշարը բաժանվում է՝ բնիկ հայերեն, ստացվածքային կամ ժառանգորդական բառերի և փոխառությունների»³⁸:

Հայերենը զարգացման տարբեր փուլերում կատարել է փոխառություններ տարբեր լեզուներից, որոնցից հայերենին են անցել բազմաթիվ բառեր:

Այս երևույթը նկատում ենք նաև մեր քննության առարկա վեպերի հայերեն թարգմանություններում: Օրինակ՝

...*Էմիլյան պահարանից հանեց, մի վերմակ և իր խալաթը (էջ 436) // ...Emilia trasse dall'armadio, una coperta, una vestaglia (p. 30) // ... Эмилия перенесла в гостиную одеяло и халат (с. 389):*

Խալաթ միավորը հայերենում նշանակում է՝ 1) «զգեստ, որով արևելքում իշխողները պարզևատրում էին մեկին՝ ի նշան իրենց գոհունակության», 2) «տանը կամ աշխատանքի ժամանակ հագնելու երկար ու լայն վերնազգեստ», 3) «նորահարսին տրվող նվեր»³⁹: Այս բառը հայերենում կիրառվում է տարբեր ոլորտներում և մեր բառապաշարին է անցել արաբերենից⁴⁰: *Халат* բառը ռուսերենի բառապաշար է թափանցել թուրքերենից, որն էլ իր հերթին՝ այն փոխառել է արաբերենից:

...*անշարժացած, երկար-երկար նայեցի հորիզոնին (էջ 557) // ...stetti a lungo immobile, gli occhi rivolti verso l'orizzonte (p. 149) // ...устремив взгляд к горизонту (с. 470):*

Տարալեզու այս օրինակներում հանդիպում է լատիներենից փոխառված *հորիզոն* (*горизонт-orizzonte*) փոխառություն, որը սերում է հունարենի *ὄριζων, ὄριζω* ձևերից, և նշանակում է «սահմանափակում են»: *Հորիզոն* բառը հայերենի բառապաշար է անցել ֆրանսերենից⁴¹:

Նոր և նորագույն փոխառությունները, ինչպես գիտենք, հիմնականում կատարվել են եվրոպական լեզուներից, այլև ռուսերենից:

Գիտենք նաև, որ լեզվի բառապաշարի հարստացման արտաքին ճանապարհը լեզվի բառային կազմի համալրումն է ուրիշ լեզուներից կատարվող

³⁷ Անմիջական և միջնորդական փոխառություններ առանձնացումը ըստ Էդ. Բ. Աղայանի: Տ՛ես Էդ. Բ. Աղայան, նշվ. աշխ., էջ 108-109:

³⁸ Ա. Ս. Սուքիասյան, նշվ. աշխ., էջ 209: Տ՛ես նաև Հ. Ա. Օհանյան, ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը և նրա հարստացման միջոցները, Երևան, 1982, էջ 292-300:

³⁹ Է. Բ. Աղայան, նշվ. բառարան, էջ 554:

⁴⁰ Ս. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, Երևան, 1944, էջ 228:

⁴¹ Լ. Կ. Եզեկյան, Հայոց լեզու, Երևան, 2007, էջ 127:

փոխառություններով⁴²:

Հայտնի է, որ հայ-իտալական հարաբերություններն իրենց արմատներով գնում են դեպի հեռավոր միջնադար: Այնուհետև 12-րդ դարում հայ-իտալական հարաբերություններում նոր շրջան է բացվում, հատկապես գիտական և մշակութային կարևորություն ունեցող Մխիթարյան Միաբանության գործունեությամբ⁴³:

Ուստի, հիմնվելով մեզ հայտնի փաստերի վրա, կարող ենք եզրակացնել, որ իտալերենից կատարված փոխառությունները մեծ թիվ չեն կազմում, հանդիպում են սահմանափակ թվով օրինակներ, ինչպիսիք են՝ *արտիճուկ* (կանկառ բույսը) <*articiocco, գունդստաբլ* (գորքերի հրամանատար, սպարապետ) <*contestabile, դուկատ* (դրամական միավոր) <*ducato, մատիտ* <*matita, արիս* <*aria*-մեներգ, *բաս* <*basso, լիբրետտո* <*libretto, մանդոլին* <*mandolino, մակարոն* <*maccheroni, նովել* <*novella, սոլո* <*solo, սոնատ* <*sonata, սոպրանո* <*soprano, տեմպո* <*tempo*-ժամանակ, տենոր <*tenore* և այլն⁴⁴:

Նկատենք նաև, որ Ա. Մորավիայի հայերեն թարգմանություններում հանդիպում են այնպիսի փոխառություններ, որոնք հայերենին են անցել ռուսերենի միջնորդությամբ: Ուստի դրանց ստորև անդրադառնալու ենք առանձին-առանձին:

ա) Ժամանակակից գրական հայերենի արտաքին փոխառությունների հիմնական աղբյուրը տասնամյակներ շարունակ եղել է ռուսերենը: Կատարված փոխառությունները հատկապես նկատելի են 19-րդ դ. առաջին քառորդից: Ռուսերենից կատարված փոխառությունները գերազանցապես եղել են գրավոր ճանապարհով: Դրանք իմաստային տեսակետից բազմաբնույթ են, հիմնականում վերաբերում են վարչական, ռազմական, կենցաղային բնագավառներին: Ռուսերենից փոխառյալ բառեր կան նաև Ա. Մորավիայի վեպերի թարգմանության մեջ, որոնցից նշենք հետևյալները՝ *պելմեններ*, *մայկա*, *ավտոմատ*, *սլիտեր*, *ռակետ*, *կուլտուրական*, *ֆուռաժկա* և այլն:

բ) Հայերեն թարգմանություններում բազմիցս հանդիպում են այնպիսի փոխառություններ, որոնք ծագումով այլ լեզուների բառապաշարի միավորներ են, սակայն տվյալ դեպքում հանդես են գալիս ռուսերենի միջնորդությամբ: Ուստի դրանք հայերեն բառապաշարին ռուսերենի միջնորդությամբ անցած փոխառություններ են: Հետաքրքիր է, որ դրանք հաճախ նույն են հիշյալ վեպերի և՛ հայերեն, և՛ ռուսերեն թարգմանությունների միևնույն հատվածներում: Քաղված օրինակներից ներկայացնենք հետևյալ փոխառությունները՝ *սցենար-сценeggiatura-сценарий, նեպիլկ-parole-реплика, բրլո-giubetto-куртка, ֆիլմ-film-фильм, ռեժիսոր-regista-режиссер, ժանր-genere-жанр, ագրեսիվ-aggressivo-вызывающий, պրովոկացիա-provocazione-уловка, մինիստր-ministro-министр*,

⁴² Տ՛ես Լ. Կ. Եզեկյան, նշվ. աշխ., էջ 121:

⁴³ «Տեսի գերկիրն Իտալիոյ», Հայ-իտալական բարեկամության օրեր, Երևան, 2005, էջ 71-75:

⁴⁴ Ա.Ս. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1993, էջ 168:

դիվիզիա-divisione-дивизия, և այլն:

զ) Ինչպես արդեն նշել ենք, փոխառությունը յուրաքանչյուր լեզվի համար ինչ-որ չափով անհրաժեշտ լեզվական իրողություն է, այն դեպքում, երբ տվյալ լեզուն, դեռևս չկարողանալով իր սեփական միջոցներով անվանել այս կամ այն առարկան կամ երևույթը, որևէ հասկացություն, ստիպված է լինում վերցնելու մեկ այլ լեզվից: Այս կարգի բառերը փոխատու լեզվում տարբերվում են ոչ միայն իրենց կառուցվածքով, այլև հայերենին ոչ այնքան հատուկ հնչյունական կազմով:

Մեր ուսումնասիրության առարկա վեպերի հայերեն թարգմանություններում տեղ են գտել օտարաբանությունների կիրառման մի շարք օրինակներ, որոնք են՝ տրադիցիյա (ավանդույթ, սովորույթ), ֆաբրիկա (գործարան), վարիանտ (տարբերակ, փոփոխակ, տարատեսակ, վարիանտ և տարընթերցվածք, տարբերակ, այլընթերցվածք⁴⁵), անեկդոտ (զվարճապատում, զավեշտասք), սիգարետ (ծխախոտ) և այլն:

Անփոփելով ատենախոսության մեջ առաջադրված հարցերը և ուսումնասիրության արդյունքները՝ հանգել ենք հետևյալ եզրակացությունների:

1. Ա. Մորավիայի «Չոչարա» և «Արհամարհանք» վեպերի հայերեն թարգմանությունները կատարվել են տվյալ ժամանակաշրջանի գրական հայերենի նորմային համապատասխան՝ բացառությամբ բառային գործածության մի քանի դեպքերի, երբ բնագրի գրական բառաշերտին պատկանող բառային միավորի դիմաց կիրառվել են ժողովրդախոսակցական լեզվին հատուկ բառային միավորներ:

2. Ժողովրդախոսակցական լեզվին բնորոշ բառերը, բարբառային միավորները, այնուամենայնիվ, չեն խեղաթյուրել տվյալ համատեքստի բուն իմաստը, ավելին՝ ոճական առումով ինչ-որ տեղ առավել տպավորիչ են դարձրել այն:

3. Հատկապես «Արհամարհանք» վեպի հայերեն թարգմանության ընթացքում թարգմանիչը երբեմն օգտվել է ռուսերեն տեքստից, որը նկատելի է որոշ բառակապակցությունների և արտահայտությունների ուղղակի ընդօրինակման մեջ:

4. Թարգմանության մեջ տեղ են գտել մի շարք նորակազմ բառեր և բառային պատճենումներ, որոնք ուղղված են բնագրի իմաստային երանգավորումն առավել հստակ և դիպուկ արտահայտելուն, ինչպես նաև որոշ դեպքերում նպաստում են համատեքստի սեղմությանը: Նորակազմ բառային միավորների մի մասը կարող է իր արժանի տեղը գտնել հայերենի բառապաշարում և լայն կիրառություն ստանալ:

5. «Չոչարա» վեպի թարգմանության մեջ տեղ գտած խոսակցական բառաշերտին բնորոշ անեծքները, օրհնանքները, լուսանքները, ինչպես նաև խոսքի մեջ Աստծու և սրբերի հիշատակումը լիարժեք և ամբողջական ձևով արտացոլում են բնագրի հիշյալ միավորների հուզաարտահայտչական, իմաստային և ոճական առանձնահատկությունները: Հայերեն թարգմանության

⁴⁵Ա. Մ. Ղարիբյան, Ռուս-հայերեն բառարան, Երևան, 1968, էջ 67:

որոշ հատվածներում նկատելի է հիշյալ կարգի միավորների կիրառություն այն դեպքում, երբ բնագրում այդպիսի միավորներ գոյություն չունեն: Նույնը, սակայն, չի կարելի ասել առածների և ասացվածքների կիրառման մասին, քանի որ հայերեն թարգմանության մեջ հաճախ տեղ է գտնում բառացի թարգմանությունը, ընդ որում այն պարագայում, երբ հայերենում առկա են նրանց համարժեքները, ինչը չի կարելի ասել ռուսերեն թարգմանության մասին:

6. Թարգմանություններում կիրառված բառի ուղիղ և փոխաբերական իմաստների գործածության դեպքերը գրեթե ամբողջովին համարժեք են բնագրին՝ բացառությամբ «Չոչարա» վեպում թարգմանչի կողմից ստեղծված անհատական փոխաբերության որոշ դեպքերի, որոնք չունեն էական նշանակություն թարգմանության ընդհանուր մակարդակի ապահովման տեսանկյունից:

7. Անվանական, բայական և այլ խոսքի մասերից կազմված բաղադրիչներից կազմված դարձվածային միավորների վերհանման և ուսումնասիրության արդյունքում գալիս ենք այն եզրահանգման, որ մեր հաշվումներով բնագրի 42 դարձվածային միավորի դիմաց հայերենում կիրառվել է 97, որը 2,3 անգամ ավելին է, ռուսերեն թարգմանության մեջ՝ նույնպիսի միավորների ընդամենը 45 կիրառություն: Թերևս վստահաբար կարելի է ասել, որ երևույթը գնահատելի է և արժանի ուշադրության, քանի որ դարձվածքների կիրառությունը նպաստում է խոսքն առավել դիպուկ և հուզարտահայտչական տեսակետից առավել տպավորիչ դարձնելուն:

8. Թարգմանություններում ռուսերենից փոխառյալ բառերի օգտագործումը որոշ դեպքերում արդարացված չէ, քանի որ հայերենում դեռևս այն ժամանակաշրջանում գոյություն ունեին համարժեք տարբերակներ, մինչդեռ հատկապես «Արհամարհանք» վեպում միջնորդական՝ անուղղակի փոխառությունների կիրառությունն ընդունելի է, բարեհունչ և բնորոշ է տվյալ համատեքստին:

9. Հիշյալ վեպերի թարգմանության մեջ բառային օտարաբանությունների կիրառությունը բավականին սակավ է, և օրինակներից ակնհայտ է դառնում, որ թարգմանիչը երբեմն օգտագործել է բնագրի, իսկ որոշ դեպքերում նաև ռուսերենի համապատասխան միավորները:

10. Ընդհանուր եզրակացությունն այն է, որ Ա. Մորավիայի երկու վեպերի հայերեն թարգմանությունները կարևոր ձեռքբերում են ոչ միայն հայ թարգմանական գրականության, այլև նոր գրական հայերենի համար: Ռուսերեն թարգմանությունները, անշուշտ, իրենց արժանի տեղն են զբաղեցնում ռուս թարգմանչական հարուստ գրականության համայնապատկերում:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում.

1. «Իտալերենի բայի անցյալ անկատար ժամանակի դրսևորումը հայերենում (Ա. Մորավիայի «Արհամարհանք» վեպի թարգմանության հիման վրա)», «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու, 3 (52), «Ասողիկ» հրատ., Երևան, 2012, էջ 42-47:

2. «Ժողովրդախոսակցական բառերը Ա. Մորավիայի «Չոչարա» վեպի հայերեն

թարգմանության մեջ», ԵՊՀ անգլիական բանասիրության ամբիոն, անգլերենի ուսումնասիրության հայկական ասոցիացիա, «Լեզուն և գրականությունը գիտական իմացության ժամանակակից հարացույցում», գիտական հոդվածների ժողովածու, Լուսակն, Երևան, 2012, էջ 211-217:

3. «Դարձվածային միավորների օգտագործման մի քանի առանձնահատկություններ Ա. Մորավիայի «Չոչարա» վեպի հայերեն թարգմանության մեջ», Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ Հայագիտական հանդես, N 3 (20), Երևան, 2012, էջ 29-39:

Заруи Восканян
Язык армянского и русского переводов романов Альберто Моравиа «Чочара»
и «Пренебрежение»
(сопоставительный анализ)

Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10. 02.02. – «Общее и сравнительное языкознание».

Защита состоится 20-го октября 2014 г. в 15⁰⁰ на заседании специализированного совета по Лингвистике 019 ВАК при Институте языка им. Гр. Ачаряна Национальной Академии наук РА по адресу: 0015, Ереван, ул. Гр. Лусаворича 15.

РЕЗЮМЕ

Данная работа посвящена общему сопоставительному анализу языка армянского и русского переводов в романах А. Моравиа «Чочара» и «Пренебрежение». Исследование производится путем многостороннего анализа и изучения лексики оригинала текста художественного произведения, а также его армянского и русского переводов.

Актуальность исследования определяется следующими факторами:

а) переводы художественных произведений имеют большое значение для обогащения и наполнения армянской лексики;

б) в процессе перевода возникают лексические новообразования (слова и кальки), а также встречаются случаи отдельных заимствований, которые в дальнейшем могут найти свое применение в современной армянской лексике;

в) романы отличаются частым использованием фразеологических единиц, что представляет собой большую область для работы исследователя.

Диссертация состоит из введения, четырех глав, заключения и списка использованной литературы и других источников.

Первая часть введения посвящена представлению художественного творчества А. Моравиа, а вторая часть – общему описанию языка в романах «Чочара» и «Пренебрежение».

Первая глава, под названием лексический перевод, посвящена употреблению слова соответственно нормам армянского литературного языка, также рассматривается использование новообразований и лексических калек, диалектной и разговорной лексики, проводится тщательный анализ языка перевода пословиц и поговорок.

Язык армянского перевода романов А. Моравиа является литературным восточноармянским языком периода 60-ых гг. прошлого столетия, характеризуется правильными грамматическими формами и насыщенной богатой лексикой, свойственной тому времени.

Вторая глава, под названием семантический перевод, затрагивает вопросы семантического анализа лексики языка армянского и русского переводов, рассматриваются особенности семантического употребления фразеологических единиц, производится анализ ряда слов, использованных при переводе в прямом и переносном значениях.

Третья глава, под названием перевод устойчивых сочетаний фразеологических единиц, наиболее объемна и состоит из трех подглав, в которых рассматриваются структурные и смысловые особенности фразеологических единиц, по лексико-грамматическому значению и синтаксическому употреблению эквивалентных существительному, глаголу и другим частям речи, что представляет собой большое поле деятельности для исследования. В конце данной главы в процентном соотношении представлена частотность использования фразеологических единиц в оригинальном художественном тексте и в его армянском и русском переводах.

Четвертая глава, под названием заимствования и варваризмы при переводе, состоит из четырех подглав: 1) использование заимствованных слов; 2) заимствования непосредственно из русского языка; 3) заимствования, перешедшие из русского языка в армянский; 4) использование варваризмов.

В заключении подведены итоги диссертационной работы. Представлены все теоретические и практические выводы, сделанные в ходе исследования, которые полностью отвечают поставленным целям и задачам.

Zaruhi Voskanyan

**The language in Armenian and Russian translation of Alberto Moravia's novels
"Two Women" and "Contempt, or A Ghost at Noon"
(Contrastive analysis)**

Dissertation under 10.02.02 cipher –“General and Comparative Linguistics” aspiring to earn a PhD in Philology.

The defence will take place at the Address: 0015, Yerevan, G. Lusavorich 15 Street, Institute of Language after H. Acharyan of the National Academy of Sciences, at the session on Specialized Council on Linguistics 019 HAC, on October 20, 2014 at 15⁰⁰.

RESUME

The present work represents the general comparative analysis of the language used in the Armenian and Russian translation of A. Moravia's novels "Two Women" and "Contempt, or A ghost at Noon". The study is done by dint of multiple analyses and the original vocabulary learning of the work of art, and its Armenian and Russian translations.

The topicality of the work is defined by the following factors:

a) Translations of works of art are of great importance for the enrichment and saturation of Armenian vocabulary;

b) During the translations new lexical elements appear (words and loan translations/calques), there are some cases of adoption of separate words, that later can be used in modern Armenian vocabulary;

c) The novels are rich of phraseological units that are also a great field to study.

The thesis is composed of introduction, four chapters, conclusion and bibliography and sources.

The first part of introduction represents A. Moravia's creative work; the second part is dedicated to the general description of the language in the novels "Two Women" and "Contempt, or A ghost at Noon".

The first chapter named lexical translation represents the use of the word according to the standards of the Armenian literary language, as well as the use of new lexical elements and loan translations/calques, regional and colloquial vocabulary, the detailed analysis of the proverb translation.

The language of A. Moravia's novels Armenian interpretation/translation is the literary Eastern Armenian of the sixties of the XX century and is characterized by the correct grammar forms and rich vocabulary typical for that period.

The second chapter with the title semantic translation brings up the issues of the semantic analysis of the Armenian and Russian translation language, examines the features of semantic usage of the idioms, analyzes the words used in the translation in their direct and figurative meanings.

The third chapter named translation of phraseological units is more extensional and composed of three sections in which structural and semantic features of idioms equivalent to a noun, verb and other parts of speech are examined by their lexical and grammar value and by syntactical usage. This is a huge field of action for research. In the end of the chapter a percentage of idioms use in the original text and in the Armenian and Russian translations is presented.

The fourth chapter named loanwords and barbarisms in translation is composed of four sections: 1) use of loanwords; 2) loanwords directly from Russian; 3) loanwords from Russian into Armenian; 4) use of barbarisms.

In the conclusion all the theoretical and practical findings made during the study are summarized.